**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-21/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 22 դեկտեմբերի 2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան

Ռ.Ջանգոզյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Ավետիսյան

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը**

**( Կ.Հայրապետյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության մասին
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**2. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության մասին**

**Կ.Հայրապետյան)**

Քանի որ ընթացակարգի հայտեր ներկայացրած երկու մասնակիցների հավելված 1-Դիմում հայտարարության մեջ որպես իրական շահառու ներկայացված անձանց անուն ազգանուն, հայրանունները համընկնում են, ուստի համաձայն 04.05.2017թ. N 526-Ն որոշման 67-րդ կետի պահանջների՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել ընթացակարգը և հարցում կատարել իրավասու մարմին՝ մասնակիցների ներկայացրած տվյալների իսկությունը ճշտելու նպատակով:

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա պարզվեց, որ քաղաքացի Արկադյա Երեմի Սարգսյանը հանդիսանում է մասնակից «Էսզեթ Ֆարմա» և «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում:

Հիմք ընդունելով վերոնշյալը, հանձնաժողովը որոշեց մերժել «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի հայտերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

**( Կ.Հայրապետյան)**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 25.12.2020թ, ժամը 11:00-ին՝ <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՊՈԱԿ-ի շենքում, ք.Երևան Հ.Ներսիսյան 7/1 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0***

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան

Ռ.Ջանգոզյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն.Ավետիսյան